

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԴԱՎԹԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ. Գ. ԲԱՆՉԻՆՅԱՆ

1755 թ., իր տաղանդի ծաղկման շրջանում, արքունական երգիչ-բանաստեղծ Սայաթ-Նովան կազմում է ադրբեջաներեն և հայերեն երգերի իր միացյալ ժողովածուն (մայր մատյան): Ժամանակի ընթացքում, ըստ երևույթին շատ օգտագործվելու և ձեռքից-ձեռք անցնելու հետևանքով, այդ ժողովածուն մաշվում է: Նրա սկզբից ընկնում են բավական քանակությամբ ադրբեջաներեն, իսկ վերջից՝ հայերեն խաղեր (ադրբեջաներեն երգերից մնում են 19-ը, հայերենից՝ 16-ը): 1758 թ. երգիչը վազմում է ադրբեջաներեն երգերի առանձին ժողովածու (երկու պրակ), որի մեջ գետեղում է մինչ այդ գրված երգերը՝ ընդգրկելով, ըստ երևույթին, նաև մայր մատյանից ընկած ադրբեջաներեն խաղերը: Ադրբեջաներեն այս նոր ժողովածուն երգիչը կցում է մայր մատյանի սկզբին՝ լրացնելու և ամբողջացնելու համար նախկին ժողովածուն:

Նույն ձևով, նույն նպատակով և գրեթե նույն ժամանակամիջոցին (1759) երգիչը մայր մատյանի վերջից կցում է մինչև 1759 թ. գրած հայերեն խաղերը (երեք պրակ), այս անգամ էլ վերականգնելով մայր մատյանից ընկած հայերեն երգերը կամ գոնե դրանց մի մասը: Ըստ այսմ, հավելյալ տետրերում գտնվող թե՛ ադրբեջաներեն, թե՛ հայերեն այն երգերը, որոնք գրված են մինչև 1755 թ., մայր մատյանից ընկած խաղերն են: Հավանաբար բոլոր ընկած խաղերը չէ, որ վերականգնել է երգիչը: Նրա որդու՝ Օհանի ձեռագրում, ինչպես և այլ աղբյուրներում, պահպանվել են բավական թվով ադրբեջաներեն և հայերեն երգեր, որոնք բացակայում են երգչի ժողովածուից, որ ընդունված է կոչել Դավթար: Շատ հնարավոր է, որ դրանց մի մասը ժամանակին գտնվել է մայր մատյանում, իսկ մի մասն էլ, անտարակոյս, գրված հորինված է 1759 թ. հետո:

Այսպիսով, Սայաթ-Նովայի Դավթարը մի ամբողջություն է, որ ունի երեք հիմնական շերտ. ա) Մայր մատյան կամ նախկին ժողովածուի կորիզ. կազմվել է շուրջ 1755 թ., ընդգրկում է Դավթարի 85—116 էջերը (Գ. Ասատուրի համարակալմամբ): բ) Ադրբեջաներեն երգերի հավելյալ պրակներ. կազմվել է շուրջ 1758 թ. և կցվել մայր մատյանի սկզբին, ընդգրկում է Դավթարի 1—84 էջերը: գ) Հայերեն խաղերի հավելյալ պրակներ. կազմվել են շուրջ 1759 թ. և կցվել մայր մատյանի վերջին, ընդգրկում են Դավթարի 117—139 էջերը:

Այսպիսով, ուրեմն, ադրբեջաներեն և հայերեն հավելյալ տետրերն առանձին միավորներ չեն, այլ երգերի միասնական շարքեր, որոնցով ամբողջանում է մայր մատյանը կամ նախկին ժողովածուն: Եթե այդ միասնությունն աղբյուրբեջաներեն բաժնում անմիջապես զգացվում է արևելյան դիվան-ժողովածուների այբբենական տեղադրման կիրառմամբ, ապա հայերեն բաժնում երևում է տարբեր տեսակի երգերի որոշակի դասավորությունից: Հետևենք այդ հաջորդականությանը:

Ինչպես ադրբեջաներեն շարքը, մայր մատյանի հայերեն բաժինը ևս սկսվում է դիվան-ժողովածուներին հատուկ և նրանց անունից սերվող դիվանի կոչվող խաղերով (թվով երկու)։ Սրանց հետևում է միակ հայերեն բարիքավուր-բահրիքավիլը, որին հաջորդում են երկու ղազալի-գազել, երկու քալիբ, ապա երեք մուխամմազ և, ինչպես հատուկ է դիվաններին, մուխամմազներին հաջորդում են գյաֆ-վալիխաները (թվով 5)։ Այնուհետև դալիս է մի դազել, որով և ընդհատվում է մայր մատյանը։ Այդ վերջին գազելը նշանավոր «Աշխարումս ախ շիմ քաշի» երգն է, որն ունի հետևյալ ծանուցումը. «Էսպես ղազալի, Դաստա-բեդաստա քարվաճուրի ձենում, Արուքինի ասած։ Սրա հատո դիմացն է»¹։ Դրա դիմացը նախկինում եղել է «Ինձ սիրեցիր էշխըն նընգար» պատասխան գազելը, որով և, ըստ Գ. Ախվերդյանի, իր ժամանակ սկսվել է առաջին հավելյալ տետրը։ ԺԸ կամ «Աշխարումս ախ շիմ քաշի» խաղից հետո, գրում է նա, «գալիս են Դավթարի հետ կարած տետրակում 16 երեսի վրա դրած խաղերն՝ ԺԹ (կամ «Ինձ սիրեցիր էշխըն նընգար»—Հ. Բ.)...» և այլն²։ Գ. Ախվերդյանից հետո, սակայն, այդ խաղը (հաջորդի հետ միասին) թյուրիմացաբար վերջն է ընկել³, և Գ. Ասատուրը Դավթարն էջակալելիս այդ խաղին հատկացրել է ոչ թե 117, այլ 131 էջը։

Եվ այսպես, վերականգնելով մայր մատյանից ընկած խաղերը, Սայաթ-Նովան «Աշխարումս ախ շիմ քաշի» գազելին համապատասխան երգով (հատով) է սկսել առաջին հավելյալ պրակը։ Նորից իրար կողքի ստացվում է երկու գազել, ապա գալիս է շիրվանի հանգով մի հրգ, որին հաջորդում է չորս թասլիբ, ապա՝ ինը գազել և, ինչպես նախորդ դեպքերում, գազելներին հաջորդում են թասլիբները (թվով 2)։ Այս երկու թասլիբով էլ ավարտվում է 16 էջից բաղկացած առաջին հավելյալ պրակը (էջ 117—132)։

Երկրորդ հավելյալ պրակը, որն այժմ չկա, ըստ Գ. Ախվերդյանի բաղկացած է եղել վեց էջից, որ նրա ժամանակ արդեն «պատռտած, գջլտած, մաշած» են եղել։ Այդ էջերն սկսվել են երկու թասլիբով, որոնք կցվել են նախորդ տետրի վերջին երկու թասլիբին։ Այնուհետև երգիչը գրի է առել մի ուշլամա-երեքնյակ և երեք գազել։ Ապա սկսվում է երրորդ հավելյալ պրակը (այսօրվա վիճակով՝ երկրորդ, էջ 133—140), որը Գ. Ախվերդյանի ժամանակ բաղկացած է եղել տասը էջից (այժմ ութն է)։ Այս տետրի առաջին ընկած էջն սկսվել է «Աջաբ քու սիրտն ով շինից» գազելով, որը շարունակել է նախորդ տետրի դադելների խումբը։ Սրան հաջորդում է ևս վեց գազել և երգչի միակ ռուբայի-բայաթի-քալիբը։

¹ Սայաթ-Նովայի գրեթե բոլոր ծանուցումները վրացերեն են, ներկայացնում ենք Գ. Ախվերդյանի թարգմանությամբ։

² «Սայաթ-Նովա», լույս զգած աշխատասիրութենով Գեորգիա Ախվերդյան, Մոսկվա, 1852, Հառաջաբան, էջ ԺԴ։

³ Ի դեպ, այժմ էլ նույն այդ տետրի նախավերջին թերթն է (էջ 129—130) թյուրիմացաբար բերվել սկիզբ, իսկ վերջին տետրն ամբողջությամբ (էջ 133—140) դրսևում է Դավթարի սկզբում։ Առհասարակ երբ Գ. Ախվերդյանից հետո Դավթարը վերադարձվել է երգչի ժառանգներին, ըստ երևույթին, բավական խաթարվել է։ Ընկել են յոթ հայերեն խաղ ընդգրկող մաշված թերթերը, շատ ավելի խառն են եղել մյուս պրակները։ Դա երևում է նախկին էջակալումից, որ կատարել է ոչ թե Գ. Ախվերդյանը, ինչպես ենթադրում են, այլ, հավանաբար, Դավթարի հետագա տերերից մեկը (տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Սայաթ-Նովայի ֆոնդ, № 1)։

Այսպիսով, խաղերի փնջային դասավորությամբ՝ ըստ տեսակների, որ հատուկ է արևելյան դիվան-ժողովածուներին, մայր մատյանը և ֆավելյալ պրակները կազմում են մի ամբողջություն:

Ինչպես նշեցինք, առաջին հավելյալ պրակի առաջին խաղը (նախկին վիճակով) այժմ 131-րդ էջում գտնվող «Ինձ սիրեցիր, էշխն նընգար» գազելն է, որ հաջորդում է «Աշխարումս ախ շիմ քաշի» նմանատիպ խաղին: Այս երկու գաղելը, որ միասնաբար ներկայացնում են մի զուգերգ, երգիչը գրել է նույն օրը՝ 1754 թ. ապրիլի 1-ին: Բնագրի տակ նա ծաղկաշղթա է նկարել և այդ երկու երգի համար գրել հետևյալ ծանուցումը. «էսպես Արուսիկան ու իր սիրեկանը, որ խոսել են, էս էն է, սիրեկանն էս ուղիղ Սայաթ-Նովայի երեսին է ասել: Քրոնիկոնի 442-ին»: Իսկ աջ լուսանցքում գրել է. «էսպես ասել է մեկ հավատարիմ սիրեկան և մյուս երեսին Սայաթ-Նովեն, ապրիլի 1-ին, քրոնիկոնի 442-ին»: Խաղի 15-րդ տողում՝ «Յիս քու խոսկեն շիմ անցկենա» դարձվածից հետո երգիչը գրել է «Ինչ դուն ասիս», ապա ջնջել և շարունակել. «Թաք քու դամաղն շաղ ըլի»: Այստեղ, ըստ երևույթին, հեղինակը խաղը վերականգնելիս մի պահ մոռացել է նախկին ձևը, ապա հիշել է և ուղղել: Պետք է ենթադրել, որ մայր մատյանից ընկած խաղերը երգիչը մեծ մասամբ հիշողությամբ է վերականգնել:

Նույն թերթի հաջորդ էջում (132) գտնվում է «Ինչ կոնիմ հեքիմն» շիր-վանի հանգով գրված միակ հայերեն խաղը: Եթե նախորդ երկու գազելները միասնաբար ներկայացնում են երգչի ու սիրուհու երկխոսություն-զուգերգը, ապա այս խաղն ինքնին մի զուգերգ է, որի տների փոքրամասնությունը և՛ «Սայաթ-Նովեն», «սիրեկանն» բառերը, որոնք իրավացիորեն մերժել է Մ. Հասրաթյանն իր հրատարակություններում: Հատկանշական է, որ խաղի այն քառատողերը, որոնք երգչի անունից են ասված, ավարտվում են «Քու տվածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ» տողով, իսկ սիրուհու անունից ասված տների վերջին տողն է՝ «Քու ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ»: Ընդ որում, խաղի երկրորդ տան վերջին տողն ունի «ուրիշ տիղ, ամա՛ն, ուրիշ տիղ», իսկ իններորդ տան վերջին տողը՝ «ուրիշ դիղ, ամա՛ն, ուրիշ դիղ» կրկնակը: Այդ կրկնակները համապատասխանաբար պետք է վերականգնել մյուս տներում, ինչպես որ երգչի աղբյուրներն շիրվանիներն են (ՃՆՁ 17, 32): Ի դեպ, Մ. Հասրաթյանը այսպես է կարդացել խաղի վերջին տողը.

Քու տվածն ուրիշ դիղ է, ուրիշ, ուրիշ դիղ,
ամա՛ն, ուրիշ դիղ:

Այնինչ պետք է կարդալ.

Քու տվածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ,
ուրիշ դիղ, ամա՛ն, ուրիշ դիղ:

Բանն այն է, որ Դավթարի տվյալ էջում տեղ չլինելու պատճառով սղված է տողի վերջին «դիղ» բառը, իսկ կրկնակը շարունակված է աջ լուսանցքում: Բացի այդ, նույն կառուցվածքն ունի նաև նախորդ կրկնակը:

Քննվող պրակի վերջին՝ 130-րդ էջում գրված է երկու թասիլիբ: Առաջինը ուրույն կառուցվածք ունեցող «Չիս ասում թե» սկսվածքով խաղն է: Չեռա-

գրում խաղի վերջին տողը բացակայում է, չկա նաև «էսպես թասլիբ» ծանուցումը, որ բերել է Գ. Ախվերդյանը և նրա հետևությունները՝ նաև խաղերի մյուս հրատարակողները: Բնագրի տակ երկիշը գիծ է քաշել և արտագրել «Թեգուզ քու քաշն մարքրիտ տան» խաղը, որ մի երկար թասլիբի մի հատվածն է սոսկ: Սա էլ, անկասկած, մայր մատյանից ընկած երգերից է, որի ամբողջական բնագիրը չվերհիշելով, երգիչը գրի է առել միայն իր հիշած հատվածը և տակը ծանուցել. «Գուլ իս անգին-ից նույն հանգով»: «Գուլ իս անգին» բառերով սկսվել է ամբողջական խաղը, որը ցավոք, ուրիշ աղբյուրներում էլ չի պահպանվել, իսկ «նույն հանգը» պիտի հասկանալ նախորդ թասլիբ-խաղի ոտանավորի ձևը:

Դավթարում այժմ պակասող երկրորդ հավելյալ տետրը, ըստ Գ. Ախվերդյանի, սկսվել է «Քանի վուր ջան իմ» հայտնի խաղով: Երգչի միակ բալլադուր չափով (հնգավանկ) դրված հայերեն թասլիբն է սա, իննատող տներով և հայտնի կրկներգով.

Մո՛ւտ բաղչեն նազով.
Քիզ գովիմ սազով,
Յա՛ր, իլթիմազով:

Ի դեպ, այս խաղը, բացի Ս. Պայազատի հրատարակությունից⁴, ամենուրեք լույս է տեսել քառատող տներով և սխալմամբ դիտվել որպես 15 վանկանի ոտանավորով մուխամմազ:

Դավթարի վերջին հավելյալ տետրի առաջին էջում (այսօրվա վիճակով) գտնվում է «Աշխարս մե փանջարա է» հանրահայտ խաղը: Խաղը գրի առնելիս հեղինակը երկրորդ տան առաջին տողն սկսել է՝ «Աշխարս մե էրազի պես իմաստնասիրաց...», ապա ջնջել և գրել է «Դովլաթն էյթիբար շունե...» հայտնի տողը: Զնջված տողի իմաստը, սակայն, մի փոքր այլ կերպ նա արտահայտել է նույն տան երրորդ տողում («Աշխարս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով»): Այստեղ, ըստ երևույթին, երգիչը խաղը գրի առնելիս միաժամանակ մշակել է այն:

Դավթարում այս խաղի երկրորդ տան առաջին տողն այսպես է՝ «Դովլաթն էյթիբար շունե, իփոր կերթա իր շֆարով». Օհանի ձեռագրում՝ «ուր շֆարով»: Ախվերդյանն այս բառը դրել է շղատառ, իսկ Մ. Հասրաթյանը, հենվելով Օհանի տված տարբերակի վրա, այդ բառը դարձրել է ուրուշ-ֆարով (որ պարսկերեն նշանակում է պատերազմ, կռիվ, ավեր), ըստ այդմ նա խաղի այդ տողը բացատրում է հետևյալ կերպ. «Հարստությունը վստահելի բան չէ, երբ (որովհետև) կգնա, կոչնչանա կովով, ավերով»⁵: Մեր կարծիքով, պետք չէր շեղվել Երգչի ինքնագրից և «իր շքարը» դարձնել «ուրուշ քար», մանավանդ որ Օհանի մոտ վրացերեն տառերով գրված «ուր շքարը» հայերեն տառադարձելիս դառնում է «յուր շքար», որն իմաստով հավասար է «իր

⁴ Տե՛ս Ս ա յ ա թ-ն ո վ ա, Խաղեր, Բնագիրը ոլատրաստեց և խմբագրեց Ս. Պայազատ, Երևան, 1969, էջ 85—87: Տողատման այս ճիշտ սկզբունքը Ս. Պայազատն ընդօրինակել է Ա. Մնացականյանից (տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 5, էջ 78—79):

⁵ Ս ա յ ա թ-ն ո վ ա, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, կազմեց Մ. Հասրաթյան, Երևան, 1963, Բառարան, էջ 307 (այսուհետև՝ Ս ա յ ա թ-ն ո վ ա, 1963):

շքար»-ին: Շքարը երգչի խաղերի հրատարակություններում բացատրված է «որս կամ հազվագյուտ ընտիր բան»: Սակայն պարսկերեն այդ բառը ունեցել է նաև զարդ, զարդարանք, ինչև իմաստը և այդ նշանակությամբ էլ գործածվել է միջնադարի որոշ հայ բանաստեղծների կողմից: Այսպես, Կոստանդին Երզնկացին իր տաղերից մեկում ասում է.

Այն որ հագնէր ինք հանդերձ ոսկէկար,
Շարած յիր վերայ էր մարգարտով շքար⁶:

Այսինքն՝ նա, որ ոսկեկար զգեստ էր հագնում, շարած ուներ իր վրա մարգարտե զարդեր, զարդարանքներ: Այս իմաստով էլ բառն օգտագործել է Սայաթ-Նովան: Ուստի հիշյալ տողը պետք է բացատրել այսպես՝ հարստությունը (դովլաթը) արժեք (էթիբար) չունի. քանի որ (իփոր) անցնում է իր դարդու պերճանքով. և լավ մարդը նա է, շարունակում է երգիչը, որ ապրում է արժանապատվությամբ, քանի որ անցողիկ է կյանքը, ինչքան էլ նստենք խնջույքի (դոդ ու սափին): Քրիստոնեական աշխարհայեցությանը բնորոշ այս մտածողությունը արտահայտություն է գտել նաև միջնադարի այլ հայ քնարերգուների մոտ (Ֆրիկ, Մկրտիչ Նաղաշ և ուրիշներ):

Շֆար բառը գործածված է նաև 135-րդ էջում գտնվող «Արի համով դուլուղ արա» խաղի երկրորդ տողում՝ «Ամեն մարթ չի կանա ճանգի շահով շֆար, Սայաթ-Նովա»: Այս տողը Մ. Հասրաթյանը բացատրել է հետևյալ կերպ. «ամեն մարդ չի կարող ճանկել, ձեռք բերել շահով-վարձով (?) որս (հազվագյուտ, ընտիրը). ենթադրում ենք պարսկ. շահին շիքյար (բազեի որս, — ընտիր հազվագյուտ բան) ոճի աղավաղվածն է»⁷: Այստեղ ոչ մի աղավաղում չկա. պարզապես ժողովրդին ծառայող (խալխի նոքար) և արժանապատվությամբ (էթիբարով) ապրող բանաստեղծի կարծիքով ամեն մարդ չի կարող ճանկել, ձեռք գցել, հափշտակել շահ ու ինչք: Բնագրի շահով շֆար-ը պետք է դարձնել շահ ու շֆար: Հետաքրքիր է, որ երգիչը հենց այդպես էլ ցանկացել է գրել: Մտածողությամբ ու կրթությամբ հայ բանաստեղծը վրացատառ հայերեն գրելիս ու ձայնավորը, որ հայերենում երկբարբառ է (դիֆտոնգ)՝ կազմված ու և տառերից, տառադարձել է ՌՅ (ով), ուստի շահ ու շքարը կարդացվում է շահով շքար, որ ճիշտ չէ: Նույնպիսի տառադարձում նա կատարել է նաև մայր մատյանում, «էսօր իմ յարին տեսա» մուխամմազը գրի առնելիս (էջ 110—111): Խաղի ութերորդ տողի («Խաթու խալով, քաղցր լիզվով շատ ինձ պեսին բանդ իս արի») առաջին բառը գրված է խաթով, որ Մ. Հասրաթյանը դարձրել է խաթով («Խաթով, խալով...»), այնինչ երգիչը ցանկացել է գրել խաթու խալով. մի արտահայտություն, որ նա բազմիցս գործածել է: 134—135 և 138-րդ էջերում, բնագրերի տակ Դավթարի վերջին հիշատակարանի հեղինակ Հովհան Պենտելենցը նկարել է մի քանի գեղեցիկ թռչնազրեր և գրել հայատառ ու վրացատառ վանկեր ու բառեր: Իսկ 135—137-րդ էջերում երգչի որդի Մելքոնը անվարժ ձեռագրով գրել է հայերեն ու վրացերեն որոշ բառեր ու տառեր:

⁶ Կոստանդին Երզնկացի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 211, տե՛ս նաև Բառարանը, էջ 289:

⁷ Սայաթ-Նովա, 1963, Բառարան, էջ 306:

137-րդ էջում գտնվում է մի թևերի խաղ («Հիմքտ վերստին նուրեցին»)՝ գրված Մողնու Ս. Գևորգ եկեղեցու վերականգնման սուրբիվ: Ըստ Մ. Հաս-րաթյանի, Մողնու Ս. Գևորգ եկեղեցին հիմքից վերստին կառուցվել է 1751 թ., ուստի այդ թվականին էլ գրված է այս ձոնը: Այդ թվականին, սակայն, ինչպես նկատել է Պ. Հակոբյանը, վերանորոգվել է Մողնու Կամակատար Աստ-վածածին կոչված եկեղեցին, մինչդեռ Մողնու Ս. Գևորգ եկեղեցու վերակա-ռուցումը տեղի է ունեցել 1759 թ.⁸: Ուրեմն իր ձոնը Սայաթ-Նովան հորինել և Դավթարում գրի է առել 1759 թ., ճիշտ այն տարում, երբ նա փակել է իր ձե-ռագիր տաղարանը: Ընչ ի՞նչն է խանդարել նրան ավարտելու ձոնը: Մ. Հաս-րաթյանի հավանական ենթադրությամբ, անկախ երկու «խորին հավատքից, խանդարել է իր սրտին ոչ այնքան հարազատ թեման, որքան էլ պարտավոր-ված լիներ արձագանքելու այդ եկեղեցու կառուցմանը»⁹:

Վերջին հավելյալ պրակը և առհասարակ Դավթարն ավարտվում է «Յիս-փանչում իմ լսվանին» ուրբայի-բայաթի-թասլիբով: Խաղը գրված է 1753 թ., ուրեմն և սա էլ հետադայում վերականգնված երգերից է: Ըստ երևույթին խաղն սկզբնապես կազմված է եղել միայն բայաթի-թեչնիս տներից: Վերա-կանգնելիս երգիչը նրանց ներհյուսել է մի ղափիա-վարսաղ, որը նույնպես, հավանաբար, մայր մատյանից ընկած խաղերից է եղել: Ուշագրավ է, որ վերջինս, որպես առանձին խաղ արտագրված է Օհանի ձեռագրում: Մ. Հաս-րաթյանը ևս իր կազմած ժողովածուում առանձին համարի տակ (№ 55) հրա-տարակել է այդ վարսաղ խաղը («Քի սաղ զուբա»): Խաղերի միահյուսումը թելադրել է երկրորդ բայաթի տան երկրորդ տողը.

Յիս կանչում իմ յարանին.

Թեչնիս, վարսաղ, յարանին...

Խաղերի միահյուսումը թելադրել է նաև մեկ այլ հանգամանք: Ինչպես սայաթնովագիտության մեջ համոզիչ կերպով տպացուցված է արդեն, խաղի բայաթի տներում երգիչը լավանին, յարանին, զայանին, մերանին, մասանին բառերով ծածկագրել է սիրած կնոջ՝ արքայաքույր Աննայի անունը: Այդպես նա բայաթի տների մեջ քսան անգամ կրկնել է սիրուհու անունը, բացի այն, որ երկու անգամ էլ նշել է նրա անվան առաջին տառը: Դրանով չբավարար-վելով, երգիչը բայաթի տներին միահյուսել է այս վարսաղը, որի հանգ փա-կող որոշ բառերը նույնպես թեքված ձևով բովանդակում են Աննա անունը: Նաղանի, մի տանի, մե քանի, չիս անի, սուսանի, կես անի, տեսանի: Բայց ինչպե՞ս է Աննա անունը նման ձևով թեքվել: Բանն այն է, որ այդ անունը վրացիների մոտ տարածված է եղել նաև Անա ձևով: Այդ անվանաձևով են հայտնի վրաց որոշ թագուհի-իշխանուհիներ¹⁰: Իր «Սուսան-ամբուլ» սկսված-քով հայերեն խաղի մեջ ևս (№ 65), որ բացակայում է երգչի և նրա որդու ձե-ռագրերում, Սայաթ-Նովան հայկական տառանունների միջոցով հայտնում է իր սիրեցյալի անունը՝ նորից Անա ձևով («Այիր ու նու այիբ»): Համաձայն

⁸ Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3, էջ 219: Տե՛ս նաև Ջալալ-յանց Ս., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1958, էջ 69—70:

⁹ Սայաթ-Նովա, 1963, Մանոթագրություններ, էջ 255:

¹⁰ Տե՛ս Յաթուլուն Եթոպեթա, տեղում, 1955, էջ 98, 363—364:

Թիֆլիսահայ բարբառի հոլովման համակարգի, Անա հատուկ անունը տրական հոլովում ստանում է ոչ թե Անային, այլ՝ Անին ձևը, ինչպես փանջարին (փխ. փանջարային), յարին (փխ. յարային) և այլն: Այստեղից էլ լալանին ձևը (վերծանումով լալ Անին, այն է՝ գոնար Աննային):

Դավթարի վերջին՝ 140-րդ էջում Սայաթ-Նովան ցանկացել է գրի առնել մի խաղ ևս, բայց գրել է նրա առաջին երկու բառը՝ «Պատկիրքըտ նըման է» և այլևս չի շարունակել: Սա էլ, հավանաբար, մայր մատյանից ընկած խաղերից է եղել, որ երգիչը չի կարողացել վերականգնել: Դատարկ մնացած այդ էջում 1765 թ., այսինքն՝ Դավթարն ավարտելուց հինգ-վեց տարի հետո, երբ երգիչն արդեն բռնի քահանայացել էր, Հովհան Պենտելենցը՝ արքունական դիվանագետի, որ ըստ երևույթին գործուն մասնակցություն է ունեցել ձեռագրի կազմման և գրչության աշխատանքներում, թողել է վրացերեն մի հիշատակարան, աղաչելով հիշել այդ երգերի հեղինակին՝ Սայաթ-Նովային:

* * *

Ինչպես նշեցինք, Դավթարի առաջին մասը կազմում են ադրբեջաներեն խաղերը, որոնց հաջորդում է հայերեն երգերի շարքը: Ադրբեջաներեն շարքի վերջում երգիչը գրել է մի այբբենաշար (ալիֆլամա) դարահեջա, որի ծանուցման մեջ վրաց փոքր բրոնիկոնով նշել է խաղի գրության թվականը, ամիսն ու օրը՝ 1755 թ., մարտի 4: Խաղը գտնվում է Դավթարի 101-րդ էջում, նույն թերթի մյուս երեսին՝ 102-րդ էջում նա գրի է առել իր հայերեն առաջին խաղը՝ «Շատ սիրուն իս, Շախաթայի ասողին...» դիվանին, որի ծանուցման մեջ նշել է իր տարիքը (յարսուն)՝ այդ խաղի գրության ժամանակ:

Ադրբեջաներեն և հայերեն այս երկու խաղը, ծանուցումներից բացի, ունեն նաև ծածկագրեր: Դրանք շատ են զբաղեցրել սայաթնովագետներին, կատարվել են որոշ կռահումներ, սակայն վերջնական ու հաստատուն լուծումներ չեն եղել:

Նախ անդրադառնանք ադրբեջաներեն խաղին, որի ծածկագրերի վերծանումից հետո միայն կարելի է համոզիչ կերպով լուծել նաև հայերեն խաղի ծածկագրերը: Ադրբեջաներեն այս խաղը Մ. Հասրաթյանը հաջողությամբ թարգմանել է հայերեն և հրատարակել իր կազմած ժողովածուում՝ 77 համարի տակ¹¹: Դու ալիֆլամա-դարահեջա է, այսինքն՝ աշուղական երգի այն տեսակը, որ կառուցվում է այբուբենի (տվյալ դեպքում՝ արաբական) տառերի հաջորդականության վրա և որի հիմնական հանգ կազմող բառերը գրվում են տառերի այբբենական անուններով: Այդպիսին է հայերեն «Այիբ Աստված սիրիս» այբբենաշար դարահեջան (№ 50)¹²: Նման խաղերը, սովորաբար, ունենում են նաև ծածկագրեր: Խնդրո առարկա ադրբեջաներեն № 77 խաղը ունի միանգամից երկու ծածկագիր: Ահա խաղի ծածկագրեր պարունակող երկու տողը.

Հեյդան Սայադ-Նովա վովա վարընդի
լամ ալիֆ լամ յե ու ալիֆ իթի րէ¹³:

¹¹ Տե՛ս Սայաթ-Նովա, 1963, էջ 219:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 67: Խաղի ծածկագրի մեր վերծանությունը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1975, № 4, էջ 169—170:

¹³ Սայաթ-Նովա, Խաղեր, Նմանահանություն, Երևան, 1963, էջ 101:

Սա բառացի նշանակում է՝ Սայաթ-Նովան հասալ հեյից վովին և լալ (այն է՝ անգին) քարերի նման երգեր ստեղծեց։ Մ. Հասրաթյանը թարգմանել է՝

Սայաթ-Նովան հեյից դեպի վով բալից,
Ինչ վուր գըրեց՝ անգին քար, լալ ու գահար¹⁴։

Խաղի ծանոթագրության մեջ Մ. Հասրաթյանն ուշադրություն է դարձրել նախավերջին տողի վրա։ Նա ցույց է տալիս, որ 18-րդ դարի 8 թվանշանի արժեքով արաբական այբուբենի 6-րդ տառն է և պարսկականի 8-րդը, իսկ վովը (կամ վավը) 6 թվանշանի արժեքով արաբական այբուբենի 26-րդ տառն է, պարսկականի՝ 30-րդը։ «Եթե ընդունենք, — գրում է նա, — որ երգիչը թվերի ծածկագիր է տվել և գումարենք, կստացվի 14 — ոչինչ ասող գումարը. եթե բազմապատկենք՝ 48-ը նույնպես ոչ մի արժեք չի ներկայացնում, որովհետև ոտանավորը գրված է 1755 թ.։ Եթե տառերի այբուբենական հաջորդականությունը գումարենք (որը չի արվում), ապա արաբականով (որ հիմնականն է) կստացվի 32, իսկ պարսկականով (որ շատ քիչ հավանական է) կստացվի 38։ Եթե ս և ն տառերը լինեին, կենթադրեինք, որ հեղինակի գրական անվան ինիցիալներն են, բայց այս դեպքում էլ չէր ասի «Ս.-Ն. հասալ»։ Մտածել, թե, աննպատակ է գրել այդ տառերը, թեկուզ որպես գրականության, գրագիտության հասնելու սիմվոլիկ արտահայտություն, դժվար է»¹⁵։

Անվանի սայաթնովագետը, ինչպես տեսնում ենք, փորձել է ծածկագրի վերծանման բոլոր ձևերը, բայց որոշակի արդյունքի չի հասել։ Պարույր Սևակի համոզմամբ, նրան խանգարել է իր այն կարծիքը, թե Սայաթ-Նովան ծնվել է 1717 թ.։ «Եթե չլինեի այդ կանխատեսությունը, — գրում է Սևակը, — Մ. Հասրաթյանը ծածկագիրը բացած կլինեի իր իսկ երրորդ «եթե»-ի վրա. «եթե տառերի այբուբենական հաջորդականությունը գումարենք (որ չի արվում), ապա արաբականով (որ հիմնականն է) կստացվի 32, իսկ պարսկականով (որ շատ քիչ հավանական է) կստացվի 38»։

«Այս դատողության մեջ, — շարունակում է Սևակը, — ամեն ինչ ճիշտ է, բացի երկու մանրուքից, որոնցից առաջինը փակագծված «որ չի արվում» նախադասությունն է։ Իսկ ինչո՞ւ «չի արվում», և այն էլ ծածկագիր բացելու մեջ։ Թե՞ «չի արվում» լոկ այն պատճառով, որ արդյունքը չի ստացվում 1717։ Ուրեմն և փորձենք կանգ չառնել կես ճանապարհին, ինչպես (շատ ափսոս) արվել է, այսինքն՝ արաբական հեյ և վով (վավ) տառերի այբուբենական թվահամարները գումարելով ստանանք նույն 32 թվանշանը, որ մեզնից առաջ ստացել է ինքը՝ Մ. Հասրաթյանը։ Իսկ այժմ վերհիշենք, որ ծածկագիր պարունակող խաղը գրված է «մարտի 4-ին, քրոնիկոնի 443-ին», այսինքն՝ 1755-ին։ Ուրեմն՝ 1755-ին «Սայաթ-Նովան հեյ-ից հասալ վով-ին». տառերը իրենց համապատասխան թվերով փոխարինված (26+6)՝ «Սայաթ-Նովան հասալ 32-ի», այլ կերպ ասած՝ 1755-ին Սայաթ-Նովան դարձավ 32 տարեկան։ Ըստ այսմ նա պիտի ծնված լինի 1755—32=1723 թվականին»։

¹⁴ Սայաթ-Նովա, 1963, էջ 219։

¹⁵ Նույն տեղում, Ծանոթագրություններ, էջ 271։

«Մենք այս արդյունքից էլ շատ ցուց կլինեինք,— շարունակում է ճշգրտել Պ. Սեակը,— որովհետև մեկ տարվա տարբերությունը բնավ էլ չէր կարող խարխլել առաջարկվող վարկածի հիմքերը: Բայց բարեբախտաբար այդ մեկ տարվա տարբերությունն էլ կշնչվի, եթե փորձենք ստուգել Մ. Հասրաթյանի հաշվումները և ճշտենք նրա թույլ տված երկրորդ փոքրիկ սխալը, որ մեծ նշանակություն է ստանում: Բանն այն է, որ արաբական այբուբենում վավ-ը ոչ թե 26-րդ տառն է, ինչպես հաշվել է Մ. Հասրաթյանը, այլ 27-րդ (նախա-վերջին) տառը, ուստի վավ և հենց տառերի թվահամարի գումարը (27+6) դառնում է ոչ թե 32, այլ 33: Ուրեմն 1755-ին Սայաթ-Նովան ոչ թե 32, այլ 33 տարեկան էր, այսինքն՝ նա ծնվել է 1755—33=1722 թ.»¹⁶:

Ծածկագիրը Պ. Սեակը լուծում է համոզիչ ու ճշգրիտ, և դա մի ղորեղ փաստարկ է դառնում նրա ձեռքին՝ իբրև անժխտելի նշմարություն՝ ներկայացնելու Սայաթ-Նովայի ծննդյան 1722 թ. իր վարկածը: Սակայն հետագայում Պ. Սեակը, որ կես ճանապարհից շարունակել և ավարտել էր ծածկագրի վերծանությունը, հրաժարվում է դրանից, հայտարարելով, որ տվյալ խաղում ոչ մի ծածկագրություն չկա: Հիմնովին մերժելով ծածկագրի Հ. Սեոյանի շափազանց անհաջող վերծանությունը¹⁷, բանաստեղծ-գրականագետը իր մեծարժեք «Սայաթ-Նովա» մենագրության մեջ գրում է. «Գիտական տարրական կասկածամտության թելադրանքով ես իր ժամանակին ստուգել եմ Մ. Հասրաթյանի տված տեղեկությունները՝ շտկելով նրա մի սխալը. վավ-ը արաբական այբուբենում ոչ թե 26-րդ տառն է, ինչպես հաշվել է նա, այլ 27-րդը: Ինչ-ի թվահամարը եղել է ճիշտ՝ 6:

«Բայց ես հաշվի չեմ առել, որ արաբերենն ունի երկու «Հ» տառ. մեկը (خا) իսկապես էլ այբուբենի 6-րդ տառն է, իսկ մյուսը (خاا)՝ 26-րդը: Երե Սայաթ-Նովան խոսած լինե՞ր այբուբենի 6-րդ տառի մասին՝ մենք իսկապես էլ գործ կունենայինք ծածկագրության հետ, որովհետև պիտի ջանայինք հասկանալ, թե նա ինչու է 6-րդ տառը կապում 27-րդ տառի հետ: Բայց Սայաթ-Նովան նկատի է ունեցել արաբերենի ոչ քե առաջին «Հ»-ն, այլ երկրորդ «Հ»-ն: Այս դեպքում արդեն ծածկագրության բան չկա, այս երկրորդ «Հ»-ն այբուբենի 26-րդ տառն է, որին հաջորդում է «վ»-ն (27-րդ տառը): Եվ Սայաթ-Նովան «Հ»-ից հասա «վ»-ին ասելով՝ ասում է հենց այն, ինչ ասված է, այսինքն՝ որ նա պարզապես թվարկել է իրար հաջորդող երկու տառ («Հ»-ից հետո գալիս է «վ»-ն, ինչպես որ եթե հայերեն ասեինք, թե «ա»-ից հետո գալիս է «բ»-ն, կամ «ն»-ից հետո գալիս է «շ»-ն):

«Եվ անկարելի է կասկածել,— շարունակում է Սեակը,— թե Սայաթ-Նովան նկատի է ունեցել արաբերենի առաջին «Հ»-ն, որովհետև նրա այս խաղը ալիֆլամա է, այսինքն՝ այբբենաշար, այսինքն՝ ոտանավորի այն տեսակը, որ կառուցվում է այբուբենի տառերի հերթականության վրա: Այսպես՝ սկսելով արաբերենի առաջին տառից՝ Ալիֆ-ից, նա հերթականորեն տողեր է կառուցել հետագա տառերով՝ Բա, Խա, Սա... Դալ, Զալ, Բա... Լամ, Միմ, Նուն... և հասել Հեյ-ին ու Վավ-ին, հասել է և այդպես էլ ասել. «Հեյ-ից հասա Վավ-ին»¹⁸:

¹⁶ Պ. Սեակ, Երբ է ծնվել Սայաթ-Նովան, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 2, էջ 95:

¹⁷ Տես Հ. Սեոյան, Երբ է ծնվել Սայաթ-Նովան, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 124—126:

¹⁸ Պ. Սեակ, Սայաթ-Նովա. երևան, 1969, էջ 107—108:

Բոլորովին իզուր էր, սակայն, Պ. Սևակը հրաժարվում ծածկագրի իր աներկբայելի վերծանությունից և ծածկագրված տողում տեսնում միայն տառերի պարզ թվարկում: Նա պարզապես այստեղ հաշվի չի առել մի հանգամանք, որ Սայաթ-Նովայի գրեթե բոլոր ծածկագրերը երկիմաստ կամ բազմիմաստ են: Այսպես՝ «հեյ-ից հասա վով-ին» ասելով երգիչը մի դեպքում ի նկատի ունենալով արաբական այբուբենի երկրորդ հ-ն՝ 26-րդ տառը, ալիֆլամա-այբբենաշարի պահանջով ընդամենը թվարկել է երկու իրար հաջորդող տառեր՝ 26-րդ հ-ն և 27-րդ վ-ն: Այդպես նա հայերեն հիշյալ «Այիբ Աստված սիրիս» ալիֆլամա խաղի նախավերջին տողում իրար ետևից թվարկել է հայկական այբուբենի վերջին տառերը («ել 0 Ֆեն կարթալու Աստված ճարունի»)¹⁹: Դա, իհարկե, պարզ թվարկում է և ծածկագրություն լինել չի կարող: Բայց, ահա, երկրորդ դեպքում երգիչն ի նկատի ունենալով արաբական այբուբենի առաջին հ-ն՝ 6-րդ տառը, ծածկագիր է կազմել. այն ծածկագիրը, որ նախապես հաջողությամբ վերծանել էր Պ. Սևակը, այն է՝ «Սայաթ-Նովան հասավ 6+27=33-ի»: Այլ կերպ ասած՝ 1755-ին Սայաթ-Նովան դառնալ 33 տառեկան: Ըստ այդմ էլ նա ծնվել է 1722 թ.:

Տեղին է հիշել, որ Պ. Սևակը հմտորեն վերծանել է նաև Դավթարի 87-րդ էջում գտնվող աղբբեջաններն մեկ այլ դառահեջալի ծածկագիրը՝ «Յաշըմրզի Թե ու ալիֆ իբի ֆաֆ» («Տարիքս է Թե ու ալիֆ երկու ֆաֆ»): Այս «Թե ու ալիֆ երկու ֆաֆ»-ը իր բառային իմաստից զատ բովանդակում է միանգամից երկու ծածկագիր՝ այս անգամ էլ շնորհիվ արաբական այբուբենի երկու տարբեր ք-երի (մեկը՝ 400, մյուսը՝ 9 թվային արժեքով): Դրա հիման վրա, մի դեպքում, ծածկագրի վերծանությունից ստացվում է 441 թիվը, որը վրաց քրոնիկոնով հաշված տալիս է 1754 թ., մյուս դեպքում՝ 32 թիվը, որ երգչի տարիքն է այդ խաղը գրելու ժամանակ²⁰:

Եթե այս ծածկագիրը Պ. Սևակը վերծանել է արաբերենի երկու տարբեր ք-երի թվային արժեքների հաշվառմամբ, ապա աղբբեջաններն № 77 խաղի ծածկագիրը վերծանելիս պետք է հաշվի առնեն արաբերենի երկու տարբեր հ-երի այբբենական համարները: Այդ ժամանակ արդեն նա չէր հրաժարվի շարիտ վերծանության ճանապարհով ձեռք բերած մի զորավոր փաստարկից:

Եվ այսպես, աղբբեջաններն № 77 խաղի նախավերջին տողի «Սայաթ-Նովան հասավ հեյ-ից վով-ին» ծածկագրի վերծանությունն է՝ «Սայաթ-Նովան հասավ 33-ի, այն է՝ դառնալ 33 տառեկան»:

Իսկ ինչպիսի՞ն է խաղի վերջին տողի ծածկագիրը: Բերենք այդ տողը, որտեղ երգիչը արաբական այբուբենի վերջին՝ 28-րդ տառի (յե) հիշատակումով ավարտել է բոլոր տառերի թվարկումը.

Լամ ալիֆ Լամ յե ու ալիֆ իբի բե:

Ըստ Պ. Սևակի այստեղ ևս ոչ մի ծածկագրություն չկա²¹, իսկ Հ. Սևոյանի կարծիքով այս ամբողջ տողը ծածկագիր է²²: Նախորդ ծածկագիրը, ինչպես և

19 Սայաթ-Նովա, 1963, էջ 67:

20 Պ. Սևակ, Սայաթ-Նովա, էջ 33—36:

21 Նույն տեղում, էջ 107:

22 «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 126:

Սայաթ-նովայի մի քանի այլ ծածկագրեր սխալ վերծանելով, Հ. Սևոյանը ճիշտ չի լուծում նաև այս վերջին տողի ծածկագիրը։ Ասացինք, որ նա ամբողջ տողը համարում է ծածկագիր և այն արտահայտելով տառերով՝ լայաւաւ. տեղադրում է նրանց թվային արժեքները. $լ=30$, $ա=1$, $յ=10$, $ր=200$ ։ Այս «ծածկագրի» առաջին բաղադրիչը՝ $լ-ն$, Հ. Սևոյանը առանձնացնում է՝ իբրև երգչի տարիքը ցույց տվող նշան։ Այնուհետև մյուս տառերի (լայաւաւ) թվային արժեքների գումարով ($1+30+10+1+200+1+200$) ստանում է 443, որը վրաց քրոնիկոնով հաշվում և ստանում է 1755 թ.։ Այս թվականին, ուրեմն, Սայաթ-նովան, ըստ Սևոյանի, եղել է Լ՝ 30 տարեկան։ Բայց այս հաշվումով անգամ նա չի ստանում երգչի ծննդյան իր առաջարկած թվականը՝ 1726, քանի որ $1755-30=1725^{23}$ ։ Բացի այդ, խաղի ծանուցման մեջ երգիչն արդեն առանց ծածկագրի նշել է նրա գրության թվականը (այլև ամիսն ու օրը)։ Մինչդեռ խաղի վերջին տողում ծածկագրել է իր ծննդյան թվականը։

Ամենից առաջ պետք է ասել, որ ծածկագիր է ոչ թե ամբողջ տողը, այլ միայն «յի ու ալիֆ երկու բե» հատվածը։ Այդպես է նաև երգչի մյուս ծածկագրավոր դարանեջաներում։ Այսպես՝ Դավթարի 87-րդ էջում գտնվող վերոհիշյալ աղբյուրներեն խաղի ծածկագիրն է «Թե ու ալիֆ երկու ֆաֆ»-ը, հայերեն № 50 դարանեջայի ծածկագիրն է «Կեև ու ալիբ քո» հատվածը և այլն։ Աղբյուրներեն № 77 խաղի երկրորդ ծածկագիրն էլ, ուրեմն, ոչ թե ամբողջ տողն է, այլ միայն «Յե ու ալիֆ երկու բե» հատվածը։

Արդեն տեսանք, որ արաբական այբուբենում յե տառի թվային արժեքն է 10, ալիֆինը՝ 1, բե-ինը՝ 200։ Ուշագրավ է, որ ծածկագրում երգիչը յ—10-ը վերցրել է՝ մեկ (ալիֆ) անգամ, իսկ բե—200-ը՝ երկու անգամ (իֆի բե)։ Դա թվաբանական եղանակով արտահայտվում է այսպես. $10 \times 1 + 2 \times 200$ ։

Այս գործողությունից ստանում ենք 410 թիվը ($10+400$)։ Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ քրոնիկոնի 410 թվականը, որ համապատասխանում է փրկչական 1722-ին ($410+1312$)՝ Սայաթ-նովայի ծննդյան ճշգրիտ թվականին։

Անկասկած, ավելի կշահեր Պ. Սևակը, եթե շփտեր այս ծածկագրի առկայությունը ևս, որի վերծանությամբ կունենար մի նոր համոզիչ ապացույց հօգուտ 1722-ի։

Եվ այսպես, խաղի վերջին տողի «յե ու ալիֆ երկու բե» ծածկագիրը ներկայացնում է Սայաթ-նովայի ծննդյան թվականը՝ 1722։

Ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ այս (աղբյուրներեն № 77) խաղի ծանուցման մեջ Սայաթ-նովան երգի գրության թվականը հաղորդել է վրաց ֆոնիկոնով և վրացական այբուբենի տառերի թվային արժեքներով ($ՈւՄԳ. — Ու=400$, $Մ=40$, $Գ=3$), իսկ խաղի առաջին ծածկագրի մեջ իր տարիքը հաղորդել է արաբական այբուբենի տառերի հաջորդական համադրերով ($հ=6+վ=27$)։ Սա շատ կարևոր է, քանի որ Դավթարում աղբյուրներեն այս խաղին հաջորդող հայերեն առաջին խաղի ծածկագրերը ևս այս երկու սկզբունքով են կաղմված։

Դավթարի 102-րդ էջում գրի առնելով իր առաջին հայերեն խաղը՝ «Շատ սիրուն իս, Շախաթայի», Սայաթ-նովան թողնում է հետևյալ ճիշատակարան-ծանուցումը. «Էս դիվանի խիսա լավն է)։ ովոր սովրի օղորմի ասե։ Հիմի

23 Տե՛ս Պ. Սևակ, Սայաթ-նովա, էջ 107։

գուզիմ թե հայեվար ասիմ. ամեն աստուած: Իս մղղսու վուրթի Արուսիսս պստուց ինչորի յարսուն տարին գլուխ դբի ամենան խաղին, ամա սուրբ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն ու շո(ն)գուրն ու (տ)ամբուրեն»²⁴, Ուրեմն հայերեն իր առաջին խաղը Սայաթ-Նովան գրել է երեսուն (յարսուն) տարեկան հասակում և քանի որ նրա առաջին՝ թվական կրող հայերեն երգը՝ «Բլբուլի հիդ լաց իս էլի» գրված է 1752 թ., ուստի Պ. Սևակը եզրակացրել է, որ երգիչը ծնվել է 1722 թ. (1752—30): Սակայն Պ. Սևակը և մյուս սայաթնովագետները չեն նկատել, որ թվագրված է նաև այս «Շատ սիրուն իս, Շախաթայի», խաղը, բայց թվագրված է ոչ սովորական ձևով:

Բանն այն է, որ ձեռագրում խաղը հեղինակի կողմից առնված է քառանկյուն շրջանակի մեջ, որից դուրս, շորս կողմից դրված է վրացերեն շորս առանձին տառ. վերևը՝ Ու, ներքևը՝ նրան համապատասխան շեղությամբ՝ Մ, ձախ կողմում՝ Զ, աջ կողմում՝ Ն: Այսպիսով, ունենք տառերի երկու զուգորդում՝ ՈւՄ և ԶՆ, որոնք, մեր կարծիքով, անսլայման ծածկագրված թվեր են: Խաղի ծանոթագրության մեջ Մ. Հասրաթյանը փորձել է բացատրել այդ տառերի իմաստը, բայց ինչպես աղբյուրներեն Ն 77 երգի ծանոթագրության մեջ, այստեղ էլ որոշակի արդյունքի չի հասել: «Եթե ու և Վ տառերը,— գրում է նա,— ընդունենք քրոնիկոնի 440 (=1752) և Ն տառի տակ նոյեմբեր ամիսը, ապա ջ-ն, որ վրաց այբուբենում 9000 թվանշանը ներկայացնող տառն է, միանգամայն անհասկանալի կդառնա բոլոր տառերի նշանակությունը: Զի ստացվում նաև Զուևուն կամ Մեջնուն բառերը, որովհետև այս վերջինը սովորաբար նա գրում է Մեջլում ձևով»²⁵, Մ. Հասրաթյանն արդյունքի չի հասել, քանի որ երկու տարբեր ծածկագրեր դիտել է միասին: Այնինչ ՈւՄ-ն հարկավոր է առանձին դիտել, իսկ ԶՆ-ն՝ առանձին: Մ. Հասրաթյանը ճիշտ է կռահել, որ Ու և Մ տառերով վարելի է ստանալ քրոնիկոնի 440-ը (հիշենք, որ վրաց այբուբենում Ու-ն ունի 400, Մ-ն՝ 40 թվային արժեքը), որը համապատասխանում է փրկչական 1752 թ. (440+1312): Այդ թվականին երգիչը յարսուն տարեկան էր, ուստի և նա ծնվել է 1722 թ. (1752—30): Եվս մի ապացույց հագուտ 1722-ի: Ուրեմն թե՛ նախորդ խաղի ծանուցման մեջ և թե՛ այստեղ երգիչը խաղերի գրության թվականները հաղորդել է վրաց փոքր քրոնիկոնով և վրաց այբուբենի տառերի թվային արժեքներով:

Իսկ ի՞նչ են ցույց տալիս ԶՆ տառերը. նույն բանը, ինչ որ նախորդ ՀՎ-ն («Սայաթ-Նովան հասավ հեյ-ից վով-ին»), այսինքն՝ երգչի տարիքը տվյալ խաղը գրելու ժամանակ: ՀՎ-ն, ինչպես տեսանք, հավասար էր 33-ի: Սայաթ-Նովան այդ տարիքին էր 1755 թ.: Իսկ հայերեն առաջին խաղը գրելիս երգիչը յարսուն տարեկան էր, և ԶՆ-ով մատնանշել է իր այդ տարիքը: Եթե նախորդ խաղի ծածկագրում նա իր տարիքը ծածկագրել է արաբական այբուբենի 6-րդ (հեյ) և 27-րդ (վավ) տառերի հաջորդական համարների հաշվառմամբ, ապա այս խաղի ծածկագիրը նա կաղմել է նույն այբուբենի (5-րդ (ջիմ) և 25-րդ (նուն) տառերի հաջորդական համարների հիման վրա (5+25=30):

Եվ այսպես ՈւՄ=1752, իսկ ԶՆ=30: Դրանց տարբերությունը (1752—30) սորից ու նորից տալիս է Սայաթ-Նովայի ծննդյան ճշգրիտ և անառարկելի թվականը՝ 1722:

²⁴ Սայաթ-Նովա, Խաղեր, Նմանահանություն, էջ 102:

²⁵ Սայաթ-Նովա, 1963, Ծանոթագրություններ, էջ 234—235:

ЗАМЕЧАНИЯ О ДАВТАРЕ САЯТ-НОВЫ

Г. Г. БАХЧИНЯН

(Резюме)

В 1755 г. Саят-Нова составил на азербайджанском и армянском языках свой первый сборник песен (диван). Со временем рукопись сборника обветшала, было утеряно несколько начальных страниц с песнями на азербайджанском и конечных — с песнями на армянском языке. В 1758—1759 гг. поэт переработал этот сборник, включив в него новые песни, в результате чего рукопись составили три части: основная рукопись, или первоначальный диван, прибавленные тетради с азербайджанскими песнями и прибавленные тетради с армянскими песнями. В таком виде рукопись, или, как ее принято называть, Давтар, ныне хранится в Музее литературы и искусства Армении (фонд Саят-Новы, № 1). В статье исследуются в текстологическом отношении прибавленные тетради с армянскими песнями и показывается, что эти песни составляют одно целое с песнями из основной рукописи.

Подробно анализируются также криптограммы в двух песнях из Давтара: в № 77, на азербайджанском, и в № 4, на армянском языке (нумерация по изданию М. Асратяна, Ереван, 1963), содержащих по две криптограммы. В первой криптограмме из азербайджанской песни поэт, используя числовое значение арабских букв ха (6) и вав (27), называет свой возраст при создании этой песни ($6+27=33$). Она написана в 1755 г., следовательно, Саят-Нова родился в 1722 г. ($1755-33$). Эту криптограмму в свое время расшифровал Паруйр Севак, который, однако, в своей позднейшей монографии «Саят-Нова» перестал считать ее криптограммой. В статье подтверждается правильность расшифровки П. Севака. Во второй криптограмме из азербайджанской песни (йа алиф 2ра), по нашей расшифровке, поэт называет год своего рождения — 1722. В первой криптограмме из армянской песни с помощью числового значения грузинских букв у (400) и М (40) Саят-Нова датирует эту песню по Хроникону ($440+1312=1752$). Во второй криптограмме, как и в азербайджанской песне, используя числовые значения арабских букв джим (5) и нун (25), он называет свой возраст во время написания песни, т. е. в 1752 г.; это еще раз доказывает, что год рождения Саят-Новы — 1722 ($1752-30=1722$).